ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հունիսի 2014թ. N____- Ն

## ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 32-րդ կետին համապատասխան՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի 2014 թվականի մարտի 24-ի հ.9/6 որոշմամբ հաստատված Երևանի քաղաքապետարանի բյուջեի միջոցներով իրականացվող գնումների օրինականության ու գործող համակարգի արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը և Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի 2014 թվականի մարտի 31-ի հ. 12/1 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2013 թվականի տարեկան հաշվետվության 2-րդ գլխի 2.1-ին և 2.2-րդ կետերում ամրագրված վերահսկողության արդյունքներն ընդունել ի գիտություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2014 թվականի մարտի 24-ի հ.9/6 որոշմամբ հաստատված Երևանի քաղաքապետարանի բյուջեի միջոցներով իրականացվող գնումների օրինականության ու գործող համակարգի արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությամբ (պատճենը կցվում է) արձանագրված թերությունների կապակցությամբ ներկայացվել է ստորև նշված պատասխանը.

«1. Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզների սննդամթերքի ձեռքբերման գործընթացները կանոնակարգելու, միասնական գնման գործընթաց կազմակերպելու և արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ արդեն իսկ ձեռնարկվել են միջոցներ, ինչի արդյունքում մանկապարտեզների 2014 թվականի համար սննդամթերքի ձեռքբերման գործընթացները միասնական կազմակերպվել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության կողմից, որտեղ բոլոր վարչական շրջանների մանկապարտեզների սննդամթերքի բոլոր տեսակների համար օգտագործվել են նույն տեխնիկական բնութագրերը և նախահաշվային արժեքները, ինչի արդյունքում վարչական շրջանում նույն ապրանքը մատակարարվում է համապատասխան մատակարարի կողմից նույն գնով: Միաժամանակ, նշված գնման գործընթացների ժամանակ կիրառվել են նաև ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի դրույթները (սահմանված կարգով իրականացվել են շուկայի վերլուծություններ):

2. Երևանի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների, այդ թվում նաև սանիտարական մաքրման և աղբահանության ծառայություններ մատուցող համայնքային կազմակերպությունների կարիքների համար վառելիքի (բենզին և դիզելային) գնման գործընթացները 2014 թվականի համար նույնպես կազմակերպվել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության կողմից, որի արդյունքում բոլոր կազմակերպությունների համար նույն պայմանագրային գներն են ձևավորվել:

3. Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության կողմից պարբերաբար ուսումնասիրվում են համայնքային կազմակերպությունների կարիքների համար իրենց կողմից կազմակերպված գնման գործընթացները՝ առկա անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկացնելով կազմակերպություններին:

4. Ինչ վերաբերում է աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների վերաբերյալ ներկայացված առաջարկներին, ապա Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման (ներառյալ ձմռան ամիսներին) ծառայությունների ձեռքբերման նպատակով Համաշխարհային Բանկի աջակցությամբ միջազգային խորհրդատուի կողմից մշակվել են հստակ նկարագրեր և տեխնիկական բնութագրեր, համաձայն որի կազմակերպվել են գնման գործընթացներ, որոնց արդյունքում Երևան քաղաքի արևելյան և արևմտյան հատվածների համար համապատասխանաբար կնքվել են ծառայությունների ձեռքբերման պայմանագրեր արտասահմանյան օպերատորների հետ, որոնցով էլ արդեն իսկ կկարգավորվեն սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքների հետ կապված խնդիրները:

5. Ինչ վերաբերվում է Երևան քաղաքի ավագանու 02.12.2009թ. հ. 48-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջների ամբողջական կատարմանը, ապա տեղեկացնում եմ, որ Երևան քաղաքի ավագանու նշված որոշման պահանջների չկատարման հետևանքով 2013 թվականին ձեռնարկված համապատասխան միջոցների արդյունքում շուրջ 1200 տնտեսվարող սուբյեկտներ ենթարկվել են վարչական պատասխանատվության:

Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվում է կանաչապատման աշխատանքների հստակ սխեմա, իսկ մեծ մակերես /50քմ և ավելի/ ունեցող օբյեկտների համար կազմված ֆիտոնախագծերը հաստատվում են աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից:

6. Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ ՀՀ վերահսկիչ պալատի ստուգման ժամանակ, առանձին գնման պայմանագրային գների ուսումնասիրությունների ընթացքում նախահաշվային և պայմանագրային գների համեմատություններ են կատարվել այնպիսի կազմակերպությունների գնային առաջարկների հետ, որոնք ներառված չեն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ–ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների ցանկում, ուստի և Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված գնման գործընթացներին այդ ընկերությունների մասնակցությունը հնարավոր չէ ապահովել։»:

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի 2014 թվականի մարտի 31-ի հ. 12/1 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2013 թվականի տարեկան հաշվետվության 2-րդ գլխի 2.1-ին և 2.2-րդ կետերում ամրագրված վերահսկողության արդյունքներն (պատճենը կցվում է) քննարկվել են Երևանի քաղաքապետարանում և դրանց վերաբերյալ ներկայացվել է ստորև նշված պատասխանը.

«1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ մակապարտեզները, որպես համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ, հանդիսանում են պատվիրատուներ և իրենց կարիքների համար կազմակերպում են առանձին գնման գործընթացներ, որի ժամանակ կարող է ձևավորվել ինչպես նախահաշվային տարբեր գներ, այնպես էլ մրցակցության արդյունքում պայմանագրային տարբեր գներ։

Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզների սննդամթերքի ձեռքբերման գործընթացները կանոնակարգելու, միասնական գնման գործընթաց կազմակերպելու և արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ արդեն իսկ ձեռնարկվել են միջոցներ, ինչի արդյունքում մանկապարտեզների 2014 թվականի համար սննդամթերքի ձեռքբերման գործընթացները միասնական կազմակերպվել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության կողմից, որտեղ բոլոր վարչական շրջանների մանկապարտեզների սննդամթերքի բոլոր տեսակների համար օգտագործվել են նույն տեխնիկական բնութագրերը և նախահաշվային արժեքները, ինչի արդյունքում վարչական շրջանում նույն ապրանքը մատակարարվում է համապատասխան մատակարարի կողմից նույն գնով։ Միաժամանակ, նշված գնման գործընթացների ժամանակ կիրառվել են նաև ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1 կետի դրույթները (սահմանված կարգով իրականացվել են շուկայի վերլուծություններ)։

2. Երևանի ենթակայության «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում արձանագրրված թերությունների մասով

բուժհաստատության տնօրինությանը տրվել է հանձնարարական՝ դրանք վերացնելու և հետագայում նմանատիպ թերությունները բացառելու վերաբերյալ։

Ինչ վերաբերում է ՍՕՏԲ-ներին, ապա հայտնաբերված խախտումները չեն վերաբերում Երևանի սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններին։

Միաժամանակ, նմանատիպ դեպքերից խուսափելու համար, Երևանի սոցիալական ծառայությունների տարածքային բաժինների պետերին տրվել է հանձնարարական՝ տրամադրել բացառապես հավաստի և հիմնավոր տեղեկանքներ։»:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 32-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին նշված օրենքով սահմանված կարգով քննարկում է Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության և այլ իրավասու պետական մարմինների իրականացրած ստուգումների արդյունքները և իր իրավասության շրջանակում դրանց վերաբերյալ ընդունում է որոշում:

Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է ընդունել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության արդյունքների մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության արդյունքների մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2014թ. բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ